

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր բաժին
№ 0117
11 JAN 2022
Կից Եզր

« 10 » հունվար 2022 թ No 72 - Ա

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ «ԴՐԱԳԵՆՈՖԱՐՄ ԱՊՈԹԵԿԵՐ ՊՈՒՇԼ ԳՄԲՀ,
ԳՈՂՇՏՐԱՍԵ 1, 84529 ՏԻՏՄՈՆԻՆԳ» ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ (ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ «ՎՈՆԵՐՎԱԳ
ՖԱՐՄԱ ԳՄԲՀ ԵՎ ՔՈ. ԿԳ, ԿԱԼՎԵՐ Փ. 7, 71034 ԲՈՒԼԻՆԳԵՆ, ԳԵՐՄԱՆԻԱ»)
«ԹԻՈԳԱՄՄԱ, ԹԻՈԿՏԱԹԹՈՒ ԴԵՂԱՀԱՏԵՐ ԹԱՂԱՆԹԱՊԱՏ 600ՄԳ;
(30/3X10/) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ, (60/6X10/) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ, (100/10X10/)
ԲԼԻՍՏԵՐՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ
ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ԵԱՏՄ 2016 թվականի նոյեմբերի 03-ի թիվ 78 որոշման 73-րդ կետը և «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի փորձաքննության 28.12.2021 թվականի N 0103129421 բացասական եզրակացությունը՝ Գերմանիայի «Դրագենոֆարմ Ապոթեկեր Պուշլ ԳմբՀ, Գոլշտրասե 1, 84529 Տիտմոնինգ» դեղագործական ընկերության արտադրության (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ «Վոներվագ Ֆարմա ԳմբՀ և Քո. ԿԳ, Կալվեր փ. 7, 71034 Բուլինգեն, Գերմանիա») «Թիոգամմա, թիոկտաթթու դեղահատեր թաղանթապատ 600մգ; (30/3x10/) բլիստերում, (60/6x10/) բլիստերում, (100/10x10/) բլիստերում» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ 20375 (000546) առ 28.12.2021թ. բացասական եզրակացությունը, առ այն, որ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացված չեն, մինչդեռ ԵԱՏՄ 2016 թվականի նոյեմբերի 03-ի թիվ 78 որոշման 73-րդ կետի համաձայն եթե հայտատուն սահմանված ժամկետում չի ներկայացնում ճանաչող պետության լիազոր մարմնի (փորձագիտական կազմակերպության) կողմից պահանջվող փաստաթղթերն ու տեղեկությունները, ապա տվյալ ճանաչող պետությունում դեղի փորձաքննությունը և գրանցումը դադարեցվում է.

Մարտի 11. 2022 թ. Ս. Լ. Բ. Բ.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել Գերմանիայի «Դրագենոֆարմ Ապոթեկեր Պուշլ ԳմբՀ, Գոլշտրասե 1, 84529 Տիտմոնինգ» դեղագործական ընկերության արտադրության (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ «Վոերվագ Ֆարմա ԳմբՀ և Քո. ԿԳ, Կալվեր փ. 7, 71034 Բոբլինգեն, Գերմանիա») «Թիոգամմա, թիոկտաթթու դեղահատեր թաղանթապատ 600մգ; (30/3x10/) բլիստերում, (60/6x10/) բլիստերում, (100/10x10/) բլիստերում» դեղի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝

1) սույն հրամանը 2-օրյա աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

10.01.2022

X 

ԱՆԱՅԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157